

ԷՄԻԼՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

*ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական,
ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և
քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ*

EMILYA ABRAHAMYAN

*Assistant to the Chairman of the Criminal Chamber of the RA Cassation Court,
PhD student at the Chair of Criminal Law and Criminal Procedure Law of
RAU Institute of Law and Politics*

ЭМИЛЯ АБРААМЯН

*Помощник Председателя Уголовной палаты Кассационного суда РА,
соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального права
Института права и политики РАУ*

**ՊԱՏԺԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐԸ՝ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**PROSPECTS OF THE DEVELOPMENT OF THE INSTITUTE OF
SENTENCING IN THE CONTEXT OF THE IMPLEMENTATION OF
THE PRINCIPLES OF JUSTICE AND HUMANISM**

**ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ИНСТИТУТА НАЗНАЧЕНИЯ
НАКАЗАНИЯ В КОНТЕКСТЕ РЕАЛИЗАЦИИ ПРИНЦИПОВ
СПРАВЕДЛИВОСТИ И ГУМАНИЗМА**

Հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու իրագործումն իրենից ենթադրում է վերջինի նկատմամբ պետության կողմից օրենքով սահմանված կարգով քրեաիրավական ներգործության միջոցների կիրառում: Որպես քրեաիրավական ներգործության միջոց և, հետևաբար, քրեական պատասխանատվության իրագործման ձև, հանդես է գալիս քրեական պատիժը, որի էությունն այն է, որ դրա միջոցով պետության անունից բացասական գնահատական է տրվում անձի արարքին:

Պատիժ նշանակելու գործընթացը դատաքննության կարևորագույն փուլերից է, որում տեսանելի է դառնում արդարադատության իրականացումը, և դրա վերաբերյալ հասարակության շրջանում ձևավորում որոշակի պատկերացում: Հետևաբար, դատարանները պետք է պատշաճ ջանասիրություն և ուշադրություն ցուցաբերեն՝ հատկապես ապահովելով արդարության սկզբունքի հետևողական կենսագործումը:

Այս կապակցությամբ պրոֆեսոր Ս. Ավետիսյանն առաջարկել է Նոր քրեական

օրենսգրքի հայեցակարգի հիմքում դնել հետևյալ հիմնարար դրույթները. «Արդարության և արդյունավետության եզրույթները պետք է դիտվեն որպես քրեական պատասխանատվության գնահատման չափանիշներ: Արդար և արդյունավետ քրեական պատասխանատվությունը պետք է հանդիսանա սոցիալական կառավարման կարևոր գործիք: Քրեական պատասխանատվությունը չպետք է շահավետ լինի առանձին քաղաքացիների և մարդկանց խմբերի համար: Անհրաժեշտ է սահմանել քրեական պատասխանատվության արդարացիության և արդյունավետության նպատակը, առարկան և գնահատման ձևերի չափորոշիչները»¹:

«Վճռաբեկ դատարանը տարիների ընթացքում ձևավորած իր նախադեպային իրավունքի շրջանակում կայուն դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվող պատիժն արդարացի է, եթե գործի բոլոր հանգամանքների՝ հանցագործության բնույթի և վտանգավորության աստիճանի (կատարման եղանակ, տեղ, ժամանակ, իրադրություն, գործիքներ և միջոցներ, նպատակ, շարժառիթներ, մեղքի ձև և տեսակ և այլն), մեղմացնող և ծանրացնող հանգամանքների, ինչպես նաև անձը բնութագրող տվյալների համակողմանի և ամբողջական վերլուծության արդյունք է:

«Քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածը սահմանում է, որ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար: Անհրաժեշտ է նշել, որ «Քրեական օրենսգրքի վերոնշյալ հոդվածի կարգավորումն ամբողջական չի արտացոլում արդարության սկզբունքի ողջ էությունը, քանի որ ուղղված է առավելապես պատժի անհատականացման հարցերի կարգավորմանը: Այս առումով առավել նպատակահարմար է ընդլայնել քննարկվող սկզբունքի սահմանները նաև «Քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասում՝ այն շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«1. Քրեական օրենսդրությունը հիմնվում է արդարության սկզբունքի վրա, այսինքն՝ պետք է համապատասխանի անձի, հասարակության և պետության քրեաիրավական պաշտպանության հաստատման, արարքի պայծելիության սահմանման, ինչպես նաև դրա անհատականացման չափանիշների օբյեկտիվ պահանջմունքներին, անհրաժեշտ և բավարար լինեն պատժի նպատակների իրագործումն ապահովելու տեսանկյունից: Հանցանք կատարած անձի նկատմամբ նշանակվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի:»:

Ակնհայտ անարդարացի պատիժը և, հետևաբար, դրա նպատակների չիրագործումը հանգեցնում է դատարանի գործունեության բացասական գնահատմանը, քանի որ միայն դատարանն է, որպես արդարադատություն իրականացնող մարմին, իրավասու պետության անունից հանցագործություն կատարած անձի

¹ Տե՛ս Ավերիսյան Ս. Ս., «Նոր քրեական օրենսգրքի նախագծի տեսական մոդելի (հայեցակարգի) մշակման անհրաժեշտության վերաբերյալ առանձին հիմնահարցեր, «Դատական իշխանություն», 2011, թիվ 11-12 (148-149), էջ 27:

նկատմամբ կայացնել դատավճիռ և նշանակել համապատասխան պատիժ: Արդարացի է այն օրենքը, որը համապատասխանում է հանցավոր արարքների վերաբերյալ տվյալ հասարակության պատկերացումներին: Բացի դրանից՝ արդարացի է այն օրենքը, որը հանցագործությունների համար նախատեսում է համաչափ պատիժներ, արդարացի օրենքը վայելում է հասարակության հարգանքն ու աջակցությունը, իսկ ժողովրդի կամքը և իրավագիտակցությունը չարտահայտող օրենքները դատապարտված են և երբեք չեն կարող գործել ու ծառայել իրենց առջև դրված նպատակների իրականացմանը²:

Քրեական իրավունքում արդարությունը որոշակի իմաստով ներառում է նաև քրեաիրավական կարևորագույն մի շարք այլ սկզբունքներ, օրինակ՝ մարդասիրության սկզբունքը: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան քրեական քաղաքականության անկյունաքար է համարում մարդասիրության սկզբունքը: ՀՀ քրեական իրավունքում մարդասիրության սկզբունքի նախատեսումը ենթադրում է, որ քրեական պատասխանատվությունը և պատիժը չեն հետապնդում հանցանք կատարած անձին ֆիզիկական տանջանքներ պատճառելու, նրա մարդկային արժանապատվությունը նվաստացնելու նպատակ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Մարդասիրության սկզբունքը» վերտառությամբ 11-րդ հոդվածը սահմանում է, որ. *«ՀՀ քրեական օրենսգրքը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն: Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատիժի»:*

Ներպետական օրենսդրությունում վերոնշյալ սկզբունքի ամրագրման համար հիմք են հանդիսացել այն միջազգային իրավական ակտերը, որոնցում մարդասիրության սկզբունքն ուղղակի կամ անուղղակի կերպով ամրագրված է. այդպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966), Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիան (1984), Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան (1965), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան (1950), Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան (1996):

Մարդասիրության սկզբունքի վերաբերյալ Վճռաբեկ դատարանը Ն. Սարգսյանի գործով որոշմամբ արձանագրել է. *«(...) Պատժի նշանակման մարդասիրության սկզբունքն ունի երկու կողմ, այն է՝*

- 1) *մարդասիրություն հասարակության նկատմամբ, որի էությունը տուժողի, հասարակության և պետության շահերի պաշտպանությունն է:*
- 2) *մարդասիրություն հանցանք կատարած անձի նկատմամբ. դա նշանակում*

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, Ընդհանուր մաս, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, էջ 28:

է մարդկային վերաբերմունք նրա անձի նկատմամբ, պարզի և արժանապատվության հարգում, ֆիզիկական և բարոյական տանջանքների բացառում:

Պարտիժ նշանակելիս դատարանը պետք է հաշվի առնի մարդասիրության սկզբունքի վերոնշյալ երկու կողմերը»³:

Անդրադառնալով մարդասիրությանը որպես իրավունքի սկզբունքի՝ Վճռաբեկ դատարանը Մ. Հովհաննիսյանի վերաբերյալ որոշմամբ արձանագրել է, որ մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքները և ազատությունները, հանդիսանալով որպես իրավական հիմք մարդասիրության սկզբունքի օրենսդրական ձևակերպման համար, ամրագրված են ՀՀ Սահմանադրությունում, որը սահմանադրական կարգավորումների առանցք է դիտարկում մարդուն՝ որպես բարձրագույն արժեք, նրա անօտարելի արժանապատվությունը:

Մարդասիրության սկզբունքի բովանդակությանն անդրադառնալիս Վճռաբեկ դատարանը փաստել է, որ այն ունի երկու կողմ՝ մարդասիրություն հասարակության նկատմամբ և մարդասիրություն հանցանք կատարած անձի նկատմամբ: Մարդասիրության սկզբունքի վերոհիշյալ տարրերը փոխկապակցված և փոխհամաձայնեցված են, դրանցից մեկի իրացումը պայմանավորված է մյուսով՝ նկատի ունենալով, որ այս երկու բաղադրիչների միջև հավասարակշռության խախտումը մի կողմից կարող է հանգեցնել խիստ պատժի՝ անտեսելով արդարության և հավասարության պահանջները, մյուս կողմից՝ օրենսդրական պահանջներին չհամապատասխանող ակնհայտ մեղմ պատժի:

Արդարացի պատիժ նշանակելու համար անհրաժեշտ է, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հանցակազմերի սանկցիաները ևս համաչափ լինեն կատարված հանցագործությանը: Տարբերում են սանկցիայի հետևյալ տեսակները՝ բացարձակ անորոշ, բացարձակ որոշակի, հարաբերականորեն որոշակի և այլընտրանքային (երկրորդային): ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասին հայտնի են այնպիսի սանկցիաների տեսակներ, ինչպիսիք են՝ հարաբերականորեն որոշակի և այլընտրանքային (երկրորդային): Այլընտրանքային սանկցիան նշում է պատժի երկու կամ ավելի այլընտրանքային տեսակ (օրինակ՝ «... պատժվում է կալանքով (...) կամ ազատազրկմամբ (...):»): Հարաբերականորեն որոշակի սանկցիան սահմանում է պատժի կոնկրետ տեսակը և նրա սահմանները՝ նվազագույն և առավելագույն կամ միայն առավելագույն չափերով (օրինակ՝ «... պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև հինգ տարի ժամկետով») կամ «...պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից մինչև ութ տարի ժամկետով»): Երկրորդային պատժատեսակների շարադրանքը կոնկրետ հանցագործության համար նախատեսված հոդվածի սանկցիայում հնարավորություն է տալիս արդարադատություն իրականացնող մարմինն՝ դատարանին, առավել անհատական մոտեցում դրսևորել պատժի նշանակման հարցում և ընտրել առավել նպատակահարմար պատժատեսակը: Բացարձական որոշակի սանկցիաների վերաբերյալ դիրքորոշում է հայտնել ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2014 թվականի մայիսի 31-ի որոշմամբ, համաձայն որի՝ բացարձակ սանկցիայի նախատեսումը հակասում է ՀՀ քրեա-

³ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Նարեկ Սարգսյանի վերաբերյալ գործով 2011 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ ԵԿԴ/0042/01/11 որոշումը:

կան օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի, 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների պահանջներին⁴:

Գտնում ենք, որ օրենսդրի կողմից քրեաիրավական նորմի սանկցիան պետք է կառուցվի այնպես, որ թույլ տա արդարության և պատասխանատվության անհատականացման հնարավորություն, իսկ վերջինս ուղղակիորեն պայմանավորված է կոնկրետ գործի հանգամանքներով, որի գնահատումը հնարավոր է միայն դատարանի կողմից: Միայն այս մոտեցման դեպքում է հնարավոր ապահովել արդարացի պատիժ նշանակելու կարևորագույն քրեաիրավական սկզբունքի իրացման հնարավորությունը:

Դատարանների կողմից անարդարացի պատիժ նշանակելուն նպաստող օբյեկտիվ գործոններից է նաև այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի բազմաթիվ հոդվածների սանկցիաները ձևավորելիս օրենսդիրը համակարգային հստակ մոտեցում չի ցուցաբերել: Մասնավորապես, մի շարք հոդվածների սանկցիաների ստորին և վերին շեմերի միջև առկա է բավականաչափ մեծ խզում, ինչը, պատիժ նշանակելիս դատարանի ավելի լայն հայեցողություն է ենթադրում (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի (թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը) 3-րդ մասի սանկցիան սահմանում է. «(...) պատժվում են ազատազրկմամբ՝ յոթից տասնհինգ տարի ժամկետով (...)\», ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի (հրամանը չկատարելը) 3-րդ մասի սանկցիան սահմանում է. «(...) պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասնհինգ տարի ժամկետով», ՀՀ քրեական օրենսգրքի 392-րդ հոդվածի (մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները) սանկցիան սահմանում է. «(...) պատժվում են ազատազրկմամբ՝ տասից քսան տարի ժամկետով»): Կարծում ենք, որ սանկցիաների ստորին և վերին շեմերի միջև խզման նվազեցումը դատարանին հայեցողության ավելի սահմանափակ հնարավորություն կընձեռի՝ նպաստելով պատժի նշանակման չափանիշների հստակեցմանը:

Բացի դրանից՝ դատարանի կողմից անարդարացի պատիժ նշանակելուն նպաստող պայմաններից է նաև այն, որ օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներում չի նախատեսել սանկցիաների ստորին շեմը՝ սահմանափակվելով միայն վերին շեմի սահմանմամբ (օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը) 2-րդ մասով սահմանված է. «(...) պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով», ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի (խուլիգանություն) 3-րդ մասով սահմանված է. «(...) պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով», ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի (պետի նկատմամբ բռնի գործողու-

⁴ Այս մասին առավել մանրամասն տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Ալեք Պողոսյանի վերաբերյալ գործով 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ՏԴ/0071/01/13 որոշումը:

թյուններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը) 2-րդ մասով սահմանված է. «(...) պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատագրվմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով)»: Հետևաբար, առաջարկում ենք Հատուկ մասի բոլոր հոդվածների սանկցիաներում պարտադիր կերպով սահմանել նաև ստորին շեմը, ինչը ևս կնպաստի պատժի նշանակման չափանիշների հստակեցմանը:

Միաժամանակ, դատարանները շարունակում են սխալներ թույլ տալ պատիժներ նշանակելիս, երբեմն անտեսելով կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վտանգավորության աստիճանը, հանցավորի անձնավորությունը և գործի այն հանգամանքները, որոնք մեղմացնում կամ ծանրացնում են հանցավորի պատիժն ու պատասխանատվությունը: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը նաև վկայում է, որ քիչ չեն այն դեպքերը, երբ պատժի անհատականացման սկզբունքն անտեսելով կրկնահանցագործների, ինչպես նաև ծանր հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ նշանակվում են չհիմնավորված մեղմ պատիժներ: Դրա հետ մեկտեղ երբեմն ազատագրվման են դատապարտվում այնպիսի անձինք, որոնց ուղղումն, ըստ գործի հանգամանքների, հնարավոր է առանց հասարակությունից մեկուսացնելու, ոչ բոլոր գործերով է, երբ դրա համար առկա են բավարար հիմքեր, քննության առարկա է դարձվում պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցը:

Անհրաժեշտ է հստակ տարանջատել պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և անձը բնութագրող հանգամանքները, քանի որ դատական պրակտիկայում հաճախ են հանդիպում իրավիճակներ, երբ դատարաններն այդպիսիք նույնացնում են. մասնավորապես, միևնույն հանգամանքը տարբեր դատարանների կողմից գնահատվում է միաժամանակ և՛ որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք, և՛ որպես ամբաստանյալի անձը բնութագրող տվյալ: Մասնավորապես, անձի երիտասարդ, ամուսնացած լինելը, դրական բնութագրերի առկայությունը, հանցագործության մեջ մեղավոր ճանաչելը, կատարածի համար զղջալը, նախկինում դատապարտված չլինելը որոշ դեպքերում դիտարկվում են որպես անձը բնութագրող հատկանիշներ, մեկ այլ դեպքում՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ:

Օրինակ՝ ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելիս դատարանի կողմից որպես ամբաստանյալի անձը բնութագրող հանգամանք հաշվի է առնվել այն, որ վերջինս երիտասարդ է, նախկինում դատապարտված կամ այլ կերպ արատավորված չի եղել, իրեն լիովին մեղավոր է ճանաչել, զղջացել է կատարածի համար, բնութագրվում է դրականորեն (գործ թիվ ՏԴ/0060/01/10): Նույն հանգամանքները դատարանի կողմից գնահատվել են որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ: Օրինակ՝ Ռ. Գալստյանի վերաբերյալ թիվ ՍԴ/0044/01/10 գործով կայացված դատավճռում որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է գնահատվել այն, որ նա նախկինում դատապարտված չի եղել, երիտա-

սարդ է, քաղաքապետի կողմից տրված բնութագրի համաձայն բնութագրվում է դրականորեն, անկեղծորեն զղջացել է կատարածի համար:

Միաժամանակ, դատարանների կողմից որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք են գնահատվում այնպիսի հանգամանքներ, որոնք որպես այդպիսին չեն կարող հաշվի առնվել: Այսպես, գենդերային խտրականության դրսևորման օրինակ կարելի է համարել *Տ. Վահրադյանի և մյուսների վերաբերյալ թիվ ԼԴ/0138/01/09* գործով դատարանի կողմից կայացված դատավճռով թվով չորս ամբաստանյալներից երկուսի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք հանցավորի կին լինելու հանգամանքը հաշվի առնելը: Հանցակցությամբ կատարված մեկ այլ հանցագործության վերաբերյալ գործով դատավճռում նույնպես (թիվ ԱՐԱԴ/0015/01/09) սենային հատկանիշը գնահատվել էր որպես ամբաստանյալի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Դատարանների կողմից միասնական պրակտիկա ձևավորված չէ նաև որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք անձի երիտասարդ լինելը գնահատելու հարցի առնչությամբ. նախ հստակ չէ, թե ինչ չափանիշներով են առաջնորդվում դատարաններն ամբաստանյալներին երիտասարդ համարելու հարցում, քանի որ ուսումնասիրված դատավճիռները արձանագրում են տարիքային ցենզի խայտաբղետություն: Մասնավորապես, որպես երիտասարդ են գնահատվել ինչպես անչափահասության տարիքում գտնվող, այնպես էլ քսան տարեկան, քսանութ տարեկան, ընդհուպ երեսուներեք, երեսունութ, նույնիսկ 44 տարեկան ամբաստանյալները: Այսպես, դատավճիռներից մեկով 1982 թ., 1988 թ. և 1966 թ. ծնված ամբաստանյալներից բոլորի պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք է գնահատվել երիտասարդ լինելը (գործ թիվ ԵԷԴ/0030/01/10, դատական ակտը կայացվել է 2010 թվականին):

Վերը նշվածը հիմք է տալիս փաստելու, որ անհրաժեշտ է, որպեսզի դատարանները պատիժներ նշանակելիս անշեղորեն ղեկավարվեն պատժի նշանակման ընդհանուր սկզբունքների կիրառման վերաբերյալ օրենսդրական պահանջներով, նկատի ունենալով, որ միայն օրինական, հիմնավորված և արդարացի պատիժները կարող են ապահովել պատժի ենթարկված անձանց օրենքները հարգելու, ճշտորեն կատարելու, սոցիալական արդարությունը վերականգնելու, ինչպես նաև նրանց և այլ անձանց կողմից նոր հանցագործությունների կատարումը կանխելու գործընթացի իրականացումը:

Annotation. The article gives a brief notion of justice as a principle of criminal law and reveals its content and structure. In criminal law the principle of justice has two aspects: justice of the criminal law and justice of the punishment. The effectiveness of punishment in the performance of its goals is determined by the system of criminal penalties, their terms and sizes. The principle of justice does not have any advantage if it is violated during the sentencing and the application of the punishment.

In the article, discloses and analyses in detail the conditions, under which the punishment is recognized as complying with the principles of justice and humanism.

The author represents definitions made by scientists on this topic, as well as legal positions and approaches of the Court of Cassation of RA.

Аннотация. В данной статье дается краткое определение понятия «справедливость» как принцип уголовного права, раскрывается его содержание и структура. Принцип справедливости в уголовном праве имеет два аспекта: справедливость уголовного закона и справедливость наказания. Эффективность наказания в выполнении своих целей определяется системой уголовных наказаний, их сроками и размерами. Если при назначении наказания и его применении был нарушен принцип справедливости, то оно не несет никакой пользы.

В статье подробно раскрываются и анализируются условия, при соблюдении которых наказание признается соответствующим принципу справедливости и принципу гуманизма.

Автор приводит определения ученых по данной теме, а также правовые позиции и подходы Кассационного суда РА.

Բանալի բառեր – պատիժ, պատժի նշանակում, արդարություն սկզբունք, մարդասիրության սկզբունք, պատժի անհատականացման չափանիշներ:

Keywords: *punishment, sentencing, principle of justice, principle of humanism, criteria of individualization of punishment.*

Ключевые слова: *наказание, назначение наказания, принцип справедливости, принцип гуманизма, критерии индивидуализации наказания.*

Է. Աբրահամյան - ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական, ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ, էլ. հասցե՝ emilyaabrahamyan@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն 19.05.2020 թ., տրվել է գրախոսության 19.05.2020 թ., երաշխավորվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Զ. Թադևոսյանի կողմից, ընդունվել է տպագրության 22.05.2020 թ.: